*Թարգմ.*

Ի Հիշաաակ Յակոբ Բարոնչի. ծն.1800 թ. դեկաեմբերի 17-ին,
Վ.ախճ. 1879 թ. դեկտեմբերի 11-ին:

WLODZIMIERZ BARACZA/ URODZONY DNIA 13 MAJA 1807./ UMARL DNIA 13 CZERWCA 1893 R.

*Թարգմ.*

(Ի Հիշատակ) Վլադիմիր Բարոնչի. ծն. 1807 թ. մայիսի 13-ին.

Վախճ. 1893 թ. Հունիսի 13-ին:

TEREZA Z TRUCIILIŃSKICH/ BARĄCZOWA/ URODZONA W R. 1824.
ZMARLA 9 CZERWCA 1897.

*Թարգմ.*

Թերեզա Բարոնչովա՝ Տրուցիլինսկիների (գերդաստանից). ծն. 1824 թ., վախճ. 1897 թ. Հունիսի 9-ին:

*Հուշակոթողի ստորին աջ անկյունում՝*

Ł SCHIMCER

## ՎԵՐԽՆԱՑԱ ԲԱԼԿԱ ԳՅՈՒՂ
## /ԼՎՈՎԻ ՄԱՐԶ, ՊՈՒՍՏՈՄԻՏՈՎՍԿՈՒ ՇՐՋԱՆ/

*523. Տապանաքար, սպիտակ մարմարից, եզրերին՝ բուսական զարդեր, կենտրոնում՝ դափնեպսակի մեջ վերցված տոհմանշան, որի փակագիրը կարելի է վերծանել Ա-ԻԱԳ: Երկլեզվյան (հայերեն և լեհերեն) արձանագրությունները փորագրված են տոհմանշանի վերին և ստորին մասերում՝ 7-ական տող.*



Ի ՆԵՐՔՈՅ ԱՅՍՄ/ ՎԻՄԱՒ ԹԱՂԵՑԱՒ/ ՄԱՍՐՎԱ-ՆԵՑԻ ԱՒԱ/ՔԻ ՈՐԴԻ ԽԱՉՈ/ՄԸՆ, ՈՐ ԱՌ ՃՏ/ ՓՈ-ԽԵՑԱՒ ԹՎ. Ռ/ՃԾԴ (1705), ՅՈՒԼԻՍԻ Դ (4).

*524. Ապա՝ լեհերեն.*

TY POGZEBIO/ MALY (?) KRZYSZTOF/ AWAKOWICZ/ ORMIANIN/ Z PERSEYI/. ZMARL R. 1705 D. 4 Ł

Ծանոթ. 1. *Լեհերեն տապանագրի վերջին Ł տառը հավանաբար Lipen-ի (հուլիսի) սկզբնատառն է:*

*2. Լուսանկարը մեզ տրամադրել է Ն. Կ. Կրիվոնոսը:*

Լուսանկ. *153*

**Արձանագրություններ, որոնք տեղում չեն կամ չենք նկատել**

*525. Հուշասյան վրա.՝*

D.O.M.

Ecclesiam hans majorem ejusdem gloriae Dei sanctissimaeque Deiparae honori restauravit, residentiam commoditati cleri innovavit, columnam tutelari suo funditus erexit nobilis et magnificus Christophorus Augustynowicz, director et judex nat. arm. leopoli anno aere Christianae MDCXXXVI (1726).

Հրատ. *X.D.Kajetanowicz, 22.*

*Թարգմ.*

Ա[ստծու] ա[մենաբարձրյալին] ա[մենահզորին]

*Եկեղեցիս այս մեծ և սքանչելի ի փառս Աստուծո և ի պատիվ ամենասուրբ Աստվածամոր (Կույս Մարիամի) վերականգնեց, կղերի համար հարմարավետ գահանիստը նորոգեց, իր իսկ մտահղացմամբ կերտված սյունաշարը կանգնեցրեց բարեծնունդ և սքանչելի Քրիստափոր Ավգուստինովիչը՝ Լվովի հայոց առաջնորդն ու դատավորը -Քրիստոսի ծննդյան 1726 թվականին:*

*526. Հուշասալին՝*

Piae memoriae /Samuelis Cyrilli Stefanowicz/ Archiepiscopi Metrop. Leopoliesis Armenorum. /N. 1755, M. 1858 A. D. 1889./ Posuit parochuc loci.

Հրատ. *X.D.Kajetanowicz, 18.*

*Թարգմ.*

Սամուել Կիրիլ Ստեֆանովիչի՝ Լվովի հայոց արքեպիսկոպոս մետրոպոլիտի երանելի հիշատակին: Ծնվ. 1755-ին, մահ. 1858-ին: Տիրոջ 1889թ. կառուցեց տեղիս առաջնորդը:

*527. Հիշատակագրություն, նախկին տեղն անհայտ: Քաղում ենք Կայտանովիչի՝ Լվովի հայոց եկեղեցու արձանագրություններին նվիրված գրքից.*

D. O. M.

Et iterum sur /recturus sum/ et in carne mea/ videbo Deum/ Salvatorem/ meum/ Joannes Man/ czukiewicz/ in Domino/ A. D. 1710/ aetis suae 28, 26 Mai.

Հրատ. *X.D.Kajetanowicz, 17.*

*Թարգմ.*

Ա[ստծուն] ա[մենաբարձրյալին] ա[մենահզորին]

*Եվ նորից ես կբարձրանամ և իմ մեջ կտեսնեմ Աստծուն՝ իմ Փրկչին:*

*Հովհան Մանուկեւիչը ի տեր հանգեց 1710 թվականին մայիսի 26-ին 28 տարեկան (հասակում):*

*528.* Արձանագրություն, *նախկին տեղն անհայտ: Տրվում է Կայտանովիչի վերծանությամբ. 8 տող.*

Boleslaus Eques/ de Odroważ Augustynowicz/ in gratam memoriam/ avi sui nomine suo et / S. M. Leonis/ Augustynowicz/ figuram hanc renovavit/ A. D. 1877.

Հրատ. *X.D.Kajetanowicz, 22.*

*Թարգմ.*

Հեծյալ (թերևս անձնանո՞ւնն է - Eques) Բոլեսլավ Օդրովիչ Ավգուստինովիչը ի հիշատակ երախտագիտության իր պապի՝ իր անունից Լևոնի Ավգուստինովիչների այս արձանը վերականգնեց Տիրոջ 1887 թվականին:

*Վիմագրեր, որոնք մեջբերված են ականավոր պատմաբան Սադոկ (Հարություն) Բարոնչի "Żywoty stawnich Ormian w Polscc" գրքում*[146]*:*

*529. Լեհական Ավգուստ Բ թագավորի քարտուղար Նիկողայոս Մինասովիչի դստեր՝* Աննայի տապանաքարին, *24 տող*

Tu w tym grobie spoczywa Anna z Mikolajem,
Ktorzy starym na świecie żyli obyczajem
Przez dwadziescia lat czery, w milości i zgodzie,
Zgola tym trybem jaki już przestal bić w modzie.
Ac ich w leciech nierownych sprzagl Hymen ogniwem,
Gdy ż ojciec piaty kryżyk wlosem znaczyl siwym,
Malka zaś rok liczyla wieku dziewietnasty,
Gdy z grona panienskiego szla miedzy niewiasty
W drodzc bożych przykazan' chodzili oboje.
A wydawszy siedm sinow na swiat, co'rek dwoje,
Do tegoż wiek ich mlody sposobili toru,
Wieccj tu lożac trudow, niż okolo zbioru.
Ktorego byl Mikolaj szezodry dosc' Szafarzem
Dobrym, gdy sic nim dzielil nie z jednym Lazarzem,
Czyniae przed ludzkiem okiem te uczynnośe' skrycie
Gzym tusze, że zakupil wieczne sobie życie.
Anna zas' rzad prowadzac w swym oszczednym domu,
Pobożnoscia wyprzedzic' nie bardzo sie komu
Dala, z ktora i w stanie wdowim żyla sobie,
Przez dwadzies'cia lat i dwa, nim spoczela w grobie

---

146 Sadok Barącz. Zywoty slawnich Ormian w Polzce, Lwow, 1856, էջ 205-206:

O zacne dusze i niech tam cial innych popioly,

Pokrywaja kosztowne z marmuru mauzoly

Niech imion ich ozdoby, ryje napis zloty

Waszym beda nagrobkiem, droższe zlota cnoty.

*Թարգմ.*

Աստ, գերեզմանումս հանգչում է Աննան Միկոլայի հետ: Որոնք ապրեցին աշխարհում հին սովորույթներով՝

Քառասնչորս տարի սիրով և համերաշխությամբ,

Բոլորովին այն կերպ, որպիսին դադարել է այժմ մոդայիկ լինելուց.

Թեև Հիմենեյը միացրեց նրանց անհտնդիստ տարիներին,

Քանի որ հայրս նշել էր հինգերորդ տասնամյակը

Ճերմակած մազերով,

Իսկ մայրս հաշվել էր իր կյանքի տասնիններորդ տարին,

Երբ կուսանաց խմբից անցել էր կանանց մեջ.

Երկուսն էլ ապրեցին Աստծու պատվիրաններով,

Լույս աշխարհ բերելով յոթ ուստրեր և երկու դուստրեր,

(Բացի այդ), օգնում էին նրանց ջահելության ճանապարհին,

Այդ գործում ներդնելով ավելի աշխատանք, քան (հարսաությունն) կուսակելու մեջ:

Միկոլայը բավականին առատաձեռն մառանապետ էր, լավն էր,

Քանզի կիսում էր (ունեցվածքը) ոչ միայն մեկ Ղազարի հետ:

Իր կատարած (բարեգործությունը) նա թաքցնում էր մարդկանց աչքերից.

Հուսով եմ, որ դրանով նա իր համար ձեռք բերեց հավերժ կյանք,

Իսկ Աննան կառավարում էր տունը խնայողաբար,

Թույլ չէր տալիս որևէ մեկին գերազանցել իրեն՝ բարեպաշտությամբ,

Որով և ապրեց նա որբևայրի կյանքով

Քսաներկու տարի, մինչև որ իջավ գերեզման:

Օ,՛ ազնիվ հոգիներ, թող այնտեղ այդ մարմինների աճյունները

Ծածկվեն մարմարակերտ թանկարժեք դամբարաններով,

Թող նրանց աճյուններին փորագրվեն ոսկե արձանագրությամբ,

Ձեր տապանաքարը, բարեգործնե՛ր, կլինի ոսկուց ավելի թանկ:

Ծանոթ. *Հիմենեյը ամուսնության հին հունական աստվածն է:*

*Հիշատակված Ղազարը Աստվածաշնչի (Նոր Կտակարանի) «Աղքատ Ղազարոն» է, որ խորհրդանշում է աղքատությունը:*

*530. Ականավոր գործիչ* Սիմոն Սիմոնովիչի *տապանաքարին՝ 18 տող.*

Simon Simonides, situs ect hie, cui bene credas

Gongrssise Charin omnia mella sua
Versibus hic rigidas ducebat montibus ornos,
Et dulcis svadae fluxerat ore melos.
Non illum latuit, quod pagina sacra docebat,
Quaeque canit Divae pagina justitiae.
Noverat et culti nutantia sydera mundi,
Noverat excellens, quod docet Hippocrates.
Principibus placuitque Viris, sat cultus ab illis
Illos consilio, mente bonaque juvans.
Jane Zamojski! Tuus fuit hic lectissimus olim
Gineas, rerum et flos, dulcis amorque tuus.
Illius ingenio posuisti maxima rerum,
Ille Thomamque tuum surgere dat studiis
Illustres Animae! vos hic locus unus habebat,
Et nunc una domus post pia fata tenet.
Nil magnum spirate, o nil mortabia corda!
Gloria nil vestra est, nil quoque divitiae.

*Հրատ. Sadok Bara,zcs, 314.*

*Թարգմ.*

Ասա Հանգչի Սիմոն Սիմոնիդին, որին բոլորը վստահում էին.
(Քանզի) բոլորին նա ժողովեց (Charin°) մեղրաջրով,
Բերեց այս փայրը՝ շրջապատված մռայլ լեռներով:
ԵՎ. քաղցր երգեր էին բխում նրա շուրթերից.
Չէր թաքցնում այն, ինչին սովորեցնում է սուրբ մատյանը
Եվ այն, ի՛նչ ավետում է աստվածային ճշմարտության գիրքը:
Ծանաչեց և աստղերի առկայծումն (այս) հոյակապ աշխարհում,
Գերազանց ըմբռնեց և այն, ի՛նչի՛ն սովորեցնում է, Հիպոկրատը:
Եվ ամենից առաջ հաճելի էր այն մարդկանց համար,
որոնցից սովորել էր.
(Հետևել) նրանց խորհրդին, խելքին՝ հետևողական բարությամբ:
Յան Զամոյսկի, դու երբեմնի ամենաերջանիկ երկրամասն էիր.
Այստեղ էին քո (gineas°) գործերն ու ծաղիկները
և քո քաղցր սերը:
Նրա հանճարով դու ստեղծեցիր մեծափառ գործեր,
Նա և Թովման (Աքվինացի՞ն) աճեցին քո վսեմ

ուսմունքով:

Լուսավոր այրե՛ր, միևնույն տեղում էիք դուք

ապրում,

Եվ արդ միակ տունը ձեզ համար դարձավ այս հողը՝

բարեպաշտ կյանքից հետո:

Դուք այլևս ոչինչ չեք շնչում, Օ՛, ոչինչ, կշտամրված

սրտեր.

Չունեք դուք այլևս փառք և չունեք այլևս կարողություն:

*Ծանոթ. Սիմոն Սիմոնովիչը ծնվել է 1557 թ. Լվովում, աշխատել է Զամոստիեում, որտեղ և մահացել է 1629 թ. մայիսի 5-ին: Դամբարանը կառուցել և դամբանականը դրել է բժշկագիտության դոկտոր- պրոֆեսոր Գասպար Շուլցը:*

*531. Գաբրիել Գասպարովիչի տապանաքարին.*

DOM

Cerne viator in hac Gasparidis ossa...

*Ծանոթ. Տապանաքարին աղուցված մարմարակերտ սալաքարը գտնվելիս է եղել Լվովի ս. Աստվածածին եկեղեցու պատաշարի մեջ:*

*Հրատ. Sadok Barącs, 163-164.*

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՆՔԱԴՐՈՇՄՆԵՐԻ ՎՐԱ

*532. Կլոր կնիք (տրամ. 30մմ), կրկնակի շրջանակի մեջ պատկերված է գառ., իսկ եզրերին փորագրված է.*

ԱՅՍ Է ՄՈՐՀՆ ՄԱՆԳԵՐՄԱՆ ՏԱՆՈՒՏՐԱՑ:

*Հրատ. Я. Дашкевич, АОП, 240, АЧП. 175.*

*533.Կլոր կնիք (տրամ. 31մմ), վրան գառան պատկեր. կրկնակի շրջանակի եզրերին -1 տող.*

ԱՅՍ Է ՄՈՀՐՆ ԻԼՈՎԻ ՏԱՆՈՒՏԵՐԱՑ:

*Ծանոթ. Գործածվել է XVI- XVII դարերում:*

*Հրատ. Я.Дашкевич, АОП, 242, АЧП, 170, 175.*

*534. Կլոր կնիք՝ Կամենեցից. վրան՝ գառան պատկեր, կրկնակի շրջանակի մեջ՝ եզրերին.*

ՍԱ Է ՄԼՈ⌋ՀՐ ՀԱՑԼՈ⌋Ց ԴԼԱ⌋ՏԼԱ⌋ԽՏԼԱՆ⌋Ի. Ի ԹԼՈՒԻՆ⌋ ՀԼԱՑՈՑ⌋ ՋՂԹ(1550):